

կանի առ Գրադարան Եկեղեցւոյ աթորական Լէօբուլայ»:

Հմմտ. Վիեննայի Թ. 6 (Տաշեան, Յու- ցակ, էջ 22—26), որ սկզբնապէս է: Չեռա- գիրս օրինակած է հաւանօրէն հեղինակին դրագիրը, որուն մասին խօսք ըրած է Ստե- փանոս Ռօչքա 3 օգոստոս 1731 առ Արրա- համ վարդապետ թղթին մէջ. «Չսա գրա- գիրն իմ օրինակելոց է, եւ զօրինակն ի Վէ- նէտիկ յղեցից ի տիպ» (անդ, էջ 23):

(Վերջ:) Է. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԵՒՐՈՊԵԱՆ ՓՈԹՆԵՆԵԼ ԲՆՈՒՆ ԶՆՅԵՐԷՆԻ ՄԷՋ

(Շարունակութիւն):

Ա.

Աւնփուգօ «թրմոց. որ եւ է դեղարոյս տաք ջուրի մէջ դնելով՝ հիւթը առնելը կամ այդ ձեւով առած հիւթը» <իտալ. infuso «թրմուած, թրմոցով հիւթը առնուած» (իրր ած.) . դոյականն է infusione, Փրանս. infusion:

Աւուփուգա «մերժում ապրանց (երբ պահանջի համաձայն չէ կամ փճացած է)» <իտալ. rifiuta «մերժուած»:

Աւսկուփա «գիշերային գդակ (թելով գործուած կամ կտակ կարուած, բայց ոչ կերպասէ)», թրք. اسكوفيا askufya, նյն. σκούφος <իտալ. scuffia:

Զ.

Չալափուրյա «անկարգ. խառնիխուռն րան». անշուշտ օտար է:

Չանթա (վն. ջանթիկ) «պայուսակ», թրք. چانتا čanta <իտալ. zana «պայու- սակ», որմէ zanata «պայուսակ մը լցուած», նյն. τσάντα «պայուսակ»:

Չանչան «չատախօս», թրք. çančan <իտալ. ciancione «չատախօս», արմատը cian- cia «կատակ, ծաղր»:

Չավէլա «տեսակ մը տափակ կողով», թրք. çavela <անշուշտ օտար է. հմմտ. նյն. τσαβέλλα «կողով»:

Չափա «փոցի, մարկեղ, house» (ննիս կը նշանակէ «խտտերը քաղհանելու ուրաղ»), թրք. چاпа čapa <իտալ. zappa «բրէշ»:

Չափաշուլա «թափթփած, անկարգ (մարդ)», թրք. چاچاլ čapačul. անշուշտ օտար է. հմմտ. τσαπατσούλης նոյն նշ.:

Չափլա «երկաթէ տափակ եւ բարակ գործիք մը, որոյ ծայրովն արծաթեայ քան- դակաց յատակն (դէմինն) կը յարդարեն». գործածական է Ակնայ բարբառին մէջ (տե՛ս Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 348) <իտալ. ciappola «քանդակագործի կլոր կամ տափակ գրէշ, դուր»:

Չափուտ «պատուած, բոլորովին ան- պէտք դարձած կօշիկ», թրք. چاچا čaput <իտալ. ciabatta:

Չափէթ «բաճկոն» <իտալ. (վենետիկ բարբառով) giacheta, Փրանս. jaquette:

Չէթէլէ «հաշուեփայտ», թրք. چتله četele <իտալ. cedola «մասնաւոր հաշիւ», բայց վենետիկեան բարբառով «հաշուեփայտ»: — Ասոնցմէ տարբեր է վն. չաթալա «խաղողի թուփին տակ դնելու յեցակ Վ ձեւով», որ թուրքերէնէ փոխառեալ բառերուս մէջ, էջ 271 ասոր հետ կցած եմ. թրք. چاتال čatal «երկճիւղ» բառն է:

Չէֆ «պանքայի վճարատոմս» <անգլ. check (չէֆ), որմէ եւ Փրանս. chèque (շէֆ):

Չիթա «մէկ-երկու մաս լայնութեամբ՝ բարակ ու երկար փայտի կտոր, որ պատու- հանի կամ նման բաներու եզերքը կը դամեն՝ հաստատուն պահելու համար». անշուշտ օտար է, բայց ծագումն անձանօթ. նյն. եւս τσίτα:

Չիթի «լուացքի ժամանակ ձերմակեղէնը հարել, շփել, սրորելը ձեռքով», թրք. چیتی čiti անշուշտ օտար է. բայց ծագումն ան- յայտ:

Չիւն «չողեկաւը նաւամատոյցին կապե- լու հաստ չուան», չիւնի «չողեկաւը նա- ւամատոյցին կապող գործաւոր», թրք. چيما čima անշուշտ օտար է, բայց ծագումն ան- յայտ:

Չիւֆէթօ (վն. չիւֆթօ) «քարերը կպցնե- լու նիւթ մը, որ գլխաւորապէս սարայատա- կելու կը դործածեն», թրք. چتو čento <իտալ. cemento նոյն նշ. որ եւ կ'ըսուի ci- mento, հմմտ. Փրանս. ciment:

Չուֆալի «գիշերային աման», թրք. چوغال čuqal. անշուշտ օտար է. նյն. τσουχάλι նոյն նշ.:

Չուփա, չուփազ «անճարակ, ձեռքէն բան չէկող», թրք. چولپا čolpa. անշուշտ օտար է: Չօֆուրա տես Չօֆուրա:

Պ.

Պալանս «դեղագործական կշիւք» <Փրանս. balance «կշիւք (ընդհանրապէս)»:

Պալէթ «պարերով թատերասաց» <իտալ. balletto: Վերջաձայնի պատճառով տարբեր է Փրանս. ballet:

Պալէնա «կէտ անասունը», որ եւ պալե- նա պալըլի (թրք. باله baləq «ձուկ» բա- ուով). 2. «կէտի ոսկորներէ շինուած ձողիկ- ներ, որ հալուստի մէջ կը դնեն՝ ամուր պա- հելու համար». այս իմաստով աւելի գոր- ծածական է պալէլա. թրք. باله balena «կէտ» <իտալ. balena «կէտ». 2. կիտոսկր):

Պալյա «վաճառականական բեռներու մեծ հակ», թրք. بالیا balıya <իտալ. balla «հակ»:

Պալյէմէթօփի «հակայ մեծութեամբ թնդանօթ», թրք. bal-yemez-topə <իտալ. balla e mezzo (մէկ եւ կէս հակ + թրք. top «թնդանօթ» բառերէն: Այսպէս է կոչուած սոյն թնդանօթը իր ծանրութեան քաշին հա- մաձայն. իսկ ժողովրդական ստուգարանու- թեամբ դարձեր է թրք. bal yemez «մեղր չուտող»:

Պալյօզ «փարթամ, մեծահարուստ անձ մը» <իտալ. balioso «գօրեղ, կարող». այս- պէս կը կոչուէր նաեւ վենետիկեան հանրա- պետութեան ներկայացուցիչը Թուրքիոյ մէջ:

Պալֆօն «պատշգամ», թրք. بالفون bal- fon <Փրանս. balcon կամ իտալ. balcone:

Պալօ «պարահանդէս», թրք. بالو balo <իտալ. ballo:

Պալօն «օդապարիկ. 2. տղոց իրրեւ խա- դալիք՝ օդով լցուած փամփուշտ», թրք. بالون balon <Փրանս. ballon:

Պակաժ (կ'ըսուի նաեւ պաղաժ) «ճամ- բորդի բեռներ՝ շոգեկառքի մէջ բեռցուած» <Փրանս. bagage:

Պանէլա տես պալէնա:

Պանյօ «լոգանք», թրք. بانو banyo <իտալ. bagno:

Պանուսուզիֆա «նուագախումբ», թրք. بانو موسيقي banda musiqā <իտալ. banda a musica «գինուորական երաժշտախումբ»:

Պանտիէնա «գրօշ» թրք. بانديرا bandiera <իտալ. bandiera:

Պանֆա (նաեւ փանֆա, փանֆա) «գրա- մատուն», թրք. بانك banka <իտալ. banca. սակէ է նաեւ Պոլոյոյ յայտնի բանկայթի թաղը (իրր թրք. Banka altə Դրամատան տակը):

Պանֆէն (նաեւ փանֆէն) «գրամատէր,

մեծահարուստ մարդ», թրք. بانک banker <իտալ. banchiere:

Պանֆոթ «գրամատոմս» <անգլ. bank- note:

Պապա «գնտաձեւ խմորեղէն մը», թրք. بابا baba <Փրանս. baba «չամիչով կարկան- դակ»:

Պառա «խանութը դուրսէն գոցելու եր- կաթեայ երկար ձող» <իտալ. barra:

Պառպառ «բարբարոս, դաժանարարոյ» <իտալ. barbaro կամ Փրանս. barbare:

Պառպունյա «արքայաձուկ, rouget», թրք. باربونيya barbunya <իտալ. վենետիկեան բարբառով՝ barbone, յգ. barboni:

Պաստա «հալուստի վրայ կարուած ծալք՝ զարդի կամ կարճեցնելու համար» <իտալ. basta:

Պաստոն «ձեռնափայտ, դաւազան», որմէ պաստոն-հաց «ձեռնակ ալիւրով, երկար՝ ձողաձեւ հաց», թրք. باسطن baston <իտալ. bastone:

Պասօ «երաժշտութեան մէջ ցած ձայն» <իտալ. basso «ցած. 2. ցած ձայն»:

Պաստան «բուռ, ծեփ. 2. պատերը բու- ուով ձեփելը, ձերմկցնելը», թրք. بادانا badana. անշուշտ օտար է. Փրանս. կայ badigeon «բուռ, ծեփ», badigeonner «բուռով ձեփել», բայց վերջաւորութեան մէջ համա- ձայն չէ. նյն. եւս կ'ըսուի πατανα:

Պաֆօն «հասարակ մետաղ մը. 2. կեղծ սպրանք, խարդախեալ», թրք. بافون bafon <Փրանս. packfong «լնապղինձ»:

Պաֆօն տես վափոք:

Պէգիկ «տեսակ մը թղթախաղ» <Փրանս. bésiqne:

Պէլթա, պէլթա «կանացի զգեստ մ'է որ ուսերուն վրայ կ'առնեն» <Փրանս. berthé. ուրիշ է մեր ա վերջաձայնը:

Պէպէ «եսուի կողմէն մէկ կոճակ ունե- նեցող կօշիկ». անշուշտ օտար է. կը թուի Փրանս.:

Պէպէֆ «մանկիկ. 2. մանկական խաղա- լիք, տիկնիկ. 3. աչքի բեր» թրք. بيبه bebek <Փրանս. bébé «մանկիկ. 2. տիկնիկ»:

Պէրպէն «սափրիչ», թրք. بربير berber <իտալ. barbiere «սափրիչ», որմէ նաեւ նյն. μπαρμπερίη:

Պէրպաթօ «տեսակ մը անուշահոտ լի- մոն», թրք. بېرغاموت bergamot <Փրանս. bergamote. վերջաւորութեան կողմէ տարբեր է իտալ. bergamotta, bergamotto նոյն նշ.:

Պրնալիո «կեցցէ՛» < իտալ. կամ Ֆրանս. bravo!

Պրնո «հեշտադարան, սենեակի մէջ աչքերով դարան, որուն վրայ դարգեր ալ կը շարեն» < Ֆրանս. bureau «գրասեղան», որմէ նաեւ նշն. bureau «գարան»:

Պրնոզ «կանանց կրծքի զարդ մը» < Ֆրանս. broche (բուն նշ. «շամփուր»):

Պրնաչօլ «պատին վրայ հաստատուած փոքր յենարան, որուն վրայ ճրագ կը դնեն» < իտալ. bracciuolo (որուն բուն նշանակութիւնն է «բազուկ»):

Պրնօլա «կասկարայի վրայ խորոված միս», կողիկ», թրք. բարզոլա, նշն. բարզոլա < իտալ. braciola, վենետիկան բարրառով brisiola, brazola. մեր բառին ամենայնպէս վերջին ձեւն է:

Պրնօւէ «ասեղնագործութիւն» < Ֆրանս. brodé:

Պիլանչօ «հաշուեկշիռ» < իտալ. bilancio:

Պիլանո «գնդախաղ, jeu de billard», թրք. բիլարօ < իտալ. biliardo:

Պիլէթ «տոմսակ (չոգեհաւի, շոգեկառքի, թատրոնի եւն)», թրք. բիլէթ < Ֆրանս. billet կամ իտալ. biglietto:

Պիլյա «քարեգնդակ, փոքր կարէ գնդակներ՝ որոնցմով մանուկները կը խաղան» < իտալ. biglia:

Պիպիտօն «ծծակ որով կաթնկեր մանուկներուն կաթ կու տան» < Ֆրանս. biberon:

Պիպուի «ալիւրով, կաթով եւ շաքարով պատրաստուած տեսակ մը չոր փոքրիկ հացիկներ» < Ֆրանս. biscuit (բուն կը նշանակէ «կրկնեփ»):

Պիրա «գարեջուր», թրք. բիրա, նշն. բիրա < իտալ. birra:

Պիրարյա «գարեջրատուն», որ եւ կիսաթուրք ձեւով պիրահանէ < իտալ. birra-ria:

Պիտնէ «նախահաշիւ» (գրական բառ է) < Ֆրանս. budget:

Պիֆթէֆ «տապակած միս» < Ֆրանս. bifteck, որ փոխառու է անգլերէնէ:

Պուլուգ «վերնաշապիկ» < Ֆրանս. blouse:

Պուլվար «գրասեղան, ճեմելիք» < Ֆրանս. boulevard:

Պուկրէն «տեսակ մը հաստ կտաւ» < Ֆրանս. bougran կամ իտալ. bugrane:

Պուսթօ «գգեատին իրան» < իտալ. busto «մարդու իրան. 2. գգեատին իրան»:

Պուֆալ «մեծ շիշ» < Ֆրանս. bocal կամ իտալ. boccale. ստոնցմէ նաեւ նշն. բոսխալիօն. վերջինիս ձայնաւորը համապատասխան է մերին:

Պուֆլէ «ունելիով յատկապէս շինուած կամ բնական խոպոպիք մաղերու» < Ֆրանս. bouclé:

Պօթ «երկար վրով ու կոճակներով կօշիկ» < Ֆրանս. botte:

Պօթիցա «կարծ պոթ». կազմուած է Ֆրանս. botte բառէն՝ նշն. նշուակական -իցա մասնիկով:

Պօղատա «ճերմակեղէնները լուացքի ժամանակ մոխրաջուրի մէջ դնելը», թրք. բոլաթ, նշն. բոլաթ < իտալ. bucatto ճիշտ նշն. բառս անշուշտ յունարէնի մէջ նախապէս չէ ձայնը ստանալէ յետոյ՝ անցեր է մեկի:

Պօնի «ամանը զլիւրկայր դարձնելով՝ ամբողջ պարունակութիւնը մէկ անգամէն դատարկել», թրք. բոյն, նշն. բոյն < իտալ. bontà անշուշտ օտար է, բայց ծագումն անձանօթ:

Պօնիոն «տեսակ մը արական վերարկու՝ երկար եւ պոչաւոր» < Ֆրանս. bonjour. կը նշանակէ բուն «բարի լոյս», բայց դերձակութեան մէջ նաեւ այս ձեւի հազուադէպ:

Պօնի «տեսակ մը թուղթ մը՝ որով կը հրամայուի գումար մը վճարել» < իտալ. bono:

Պօնա «մեծ փոթորիկ, մրրիկ». թրք. բորա < իտալ. bora «հիւսիսային ուժեղ քամի», որմէ նաեւ նշն. բորա «փոթորիկ»:

Պօնա «արժեթուղթերու դնին վրայ խաղալու տեղ, սակարան» < իտալ. borsa:

Ռ.

Ռադա «խաղաթղթի մէջ թագաւորը» (գործածական է միայն Նոր-Նախիջևանի բարրառով) < իտալ. rege «թագաւոր» (հին ձեւ է. հիմա կ'ըսուի re):

Ռաֆօն «իրաւունք». Ռուս. բառով. շուկիս խօսելու < իտալ. ragione:

Ռէտինկօթ «երկար ու սեւ վերարկու մը» < Ֆրանս. redingote (որ իր կարգին փոխառու է անգլ. riding coat ձեւէն):

Ռէթուշ «լուսանկարչական ապակիի վրայ սրբագրութիւն» (գիտական բառ է) < Ֆրանս. retouche:

Ռօմաթիգ «յօղացաւ» < Ֆրանս. rhumatisme:

Ռօման «վէպ» (գրական բառ) < roman:

Ս.

Սաթէն «մետաքսեայ աղնիւ լաթեղէն մը» < Ֆրանս. satin:

Սաթինէթ «սաթինի նման լաթեղէն մը» < Ֆրանս. satinette:

Սալա «մեծ ու լայն սենեակ» < իտալ. sala «սրահ»:

Սալաթա «աղցան. սոխով, քացախով, ձէթով եւ որ եւ է կանաչեղէնով համեմանք. 2. խճուճ թերթերով դեղնադոյն կանաչեղէն մէջ հազարի (մարուլի) նման, որմէ միայն աղցան կը պատրաստեն», թրք. սալատա < իտալ. salata «աղցան». գրական լեզուին մէջ salata «աղցան». գրական լեզուին մէջ salata կը նշանակէ «աղած» (իդ. անց. դերբ.), իսկ «աղցան» իմաստով կը գործածուի insalata:

Սալամի «խոզի միտով երշիկ» < իտալ. salame, յոգ. salami. Աւստրիայի մէջ շատ տարածուած է Ungarische Salami (հունգարական սալամի):

Սալամուտա «աղջուր՝ մէջը ձուկ եւն պահելու» < իտալ. salamoia, վենետիկան բարրառով salamora, որ է Ֆրանս. saumure «աղջուր», թրք. եւս սալամուրա < իտալ. salamura:

Սալամուրյա «փոքր բեռնանաւ, փոքր մալուխ» < նշն. սալամուրա:

Սալթա տե'ս յաջորդը:

Սալթամարֆա «լայն թեւերով կարծ հագուստ մը». կը գործածուի նաեւ համառօտեալ սալթա ձեւով. < իտալ. saltambarco «գիւղական հազուստ մէջ, բաճկոն»:

Սալմա «սրկանջով եւ բրինձով շինուած տեսակ մը թանձր ապուր», թրք. եւս սալմա. եւրոպական բառ ըլլալու է. հմտ. Ֆրանս. salmis «կասկարայի վրայ խորոված որսի մսի կտորներով շինուած ջրոտ կերակուր մը»:

Սալյա «բերնէն վազած թուր, շոյիք», թրք. սալյա կամ salyan < իտալ. saliva «թուր»? հմտ. նշն. սալյա «շոյիք»:

Սալցա «կերակուրի համեմանք՝ քացախով, հակիթով եւն շինուած», sauce», թրք. սալցա < իտալ. salsa, վենետիկան բարրառով salza նոյն նշ.:

Սալցիցա «խոզի միտով՝ մահաճեւ փոքր

երշիկ» < իտալ. salsiccia, վենետիկ. բարրառով salciccia:

Սալօն «սրահ», թրք. սալօն salon < Ֆրանս. salon կամ իտալ. salone:

Սալոնէն «տեսակ մը կաշի՝ կօշիկ շինելու համար եւն» < Ֆրանս. chagrin, որ եւ իտալ. zigrino, անգլ. shagreen. ստոնցմէ ո՛չ մէկուն մէջ ալ ս ձայնը չկայ. ուրեմն նոր յունարէնի միջոցով?

Սամալար «ինքնաւա, հեշտաւա» < ռուս. самовар, որմէ նաեւ Ֆրանս. samovar:

Սայա «կօշիկին երեսը՝ պատրաստ, բայց դեռ չկարուած, empeigne», թրք. սայա. օտար բառ է, բայց մայր ձեւը անծանօթ:

Սանթիմէթրօ «հարիւրորդամէթր» < Ֆրանս. centimètre. այլ է իտալ. centimetro (կարգա՛ չեմթիմէթրօ). մեր բառը Ֆրանսերէնէն է, բայց երկրորդ մասը ազդուած իտալերէնէ:

Սանտալ «մակոյկ», թրք. սանտալ sandal < իտալ. sandalo:

Սանտալյա «աթոռ», Ղրբ. սրնդրա՛ «ձառի կոճղ՝ վերէն եւ վարէն լայնքին հարթ կտրուած, ոտքեր դամուած կամ առանց ոտքի, որ իրրեւ աթոռ կը գործածեն», թրք. սանտալյա «աթոռ». բայց անշուշտ օտար է, մայր ձեւը անյայտ:

Սարտելյա «աղը գրած տեսակ մը ձուկ, աղիկը»: թրք. սարտել sardela < իտալ. sardella:

Սարտելյա «խորդենի ծաղիկը, geranium», թրք. սարտելյա sardellya. անշուշտ օտար է, բայց մայր ձեւը անձանօթ. արդեօք իտալ. Sardegna (Սարդենիա) կղզին անուշտ է:

Սալաթուր «տեսակ մը լաթեղէն. պաթիթին վարնոցը». անշուշտ օտար է, բայց մայր ձեւը անձանօթ:

Սալաթրօ «սպիտակ մետաքսեայ կտորեղէն մը» < Ֆրանս. soie décréuée «մաքրուած մետաքս»:

Սափաթա «սաստիկ յանդիմանութիւն, կշտամբանք», թրք. սափաթա saparta. անշուշտ օտար է. բայց մայր ձեւ անձանօթ:

Սափաթա «բերկական տունիկ մը», թրք. սափաթա saparna < իտալ. salsapariglia (որ է Ֆրանս. salsepareille):

Սաֆօ «լայն ու երկար վերարկու» < իտալ. sacco, բուն կը նշանակէ «պարկ», բայց նաեւ «տեսակ մը լայն հագուստ»:

